ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 օգոստոսի 2014 թվականի թիվ 100 -Ա

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջներով, հիմք ունենալով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2014թ. հուլիսի 31-ի <Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրում փոփոխություն կատարելուն համաձայնություն տալու մասին> N 683 - Ա որոշումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի վարիչի քաղաքացիական ծառայության պաշտոնի /ծածկագիր՝ 70-2.2-17/ անձնագրի 11-րդ կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«բ/ ապահովում է մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների կարիքների համար աշխատանքների, ծառայությունների, ապրանքների գնման գործընթացը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2014թ. օգոստոսի 1
ք.Իջևան